ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԳԿՊ-ԳՀԱՊՁԲ-21/1»-1

ք. Վանաձոր «21» դեկտեմբերի 2020թ.

<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Մ. Ա. Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Ալֆա-Ֆարմ >> ՓԲԸ-ն , ի դեմս տնօրեն Մ. Մացակյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝

պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4 135 054,70(չորս միլիոն մեկ հարյուր երեսունհինգ հազար հիսունչորս ՀՀ դրամ 70 լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև _____ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում:[19]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված _____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

---

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[19] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի

---

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

---

[25] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փոփոխության ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ՝

<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ
Քաղ. Վանաձոր, Բաթումի 13փ.
ՀՎՀՀ 07300626
Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
Վանաձորի մ/ճ
հ/հ 247170009424
Տնօրեն՝ ----------Մ. Ա. Սիմոնյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
ք. Երևան, Շիրակի 1/68
ԷՎՈԿԱԲԱՆԿ
Հ/Հ 16600-05218060100
ՀՎՀՀ 05507136
Հեռ. 060 700-500
էլ. հասցեն՝ tender@alfapharm.am

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
« 21 » 12. 2020 թ. կնքված
«ՎԳԿՊ-ԳՀԱՊՁԲ-21/1»-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	33671114	Ամինոֆիլին 150 մգ	Էուֆիլին «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան»ԲԲԸ	Դեղահատ 150մգ, <<վախենում է խոնավությունից>>	հատ	4	6000	1500	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1500	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
5	33661121	Ացետիլսալիցիլաթթու 150 մգ	Կարդիոմագնիլ. Տակեդա ԳմբՀ	Դեղահատ աղելույծ 150մգ ապակե 22հիկում <<վախենում է խոնավությունից>>	հատ	31,26	687720	22000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	22000	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
6	33691140	Ացետիլցիստեին 600 մգ	Ֆլուիմուցիլ ամբոն Սուիտզերլանդ ՍՊԸ	Դեղահատ 600մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	241,1	144660	600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	600	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
8	33631180	Արծաթի սուլֆադիազին նրբաքսուք 1% 50գ	Դերմազին Սալուտաս	Ալյումինե պարկուճ 1%	հատ	2073	12438	6	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով	6	*2021թ. ֆինանսական միջոցներ*

			Ֆարմա Գմբհ	50գ <<վախենում է ջերմությունից>>					հեռավորության վրա դեղատուն		նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
9	33661153	Դեքսամեթազոն 0.5մգ	Դեքսամեթազոն 0.5մգ ԿՌԿԱ դ.դ.	Դեղահաբ 0,5 մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	29,8	17880	600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	600	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
11	33621380	Դիգոքսին 0.25 մգ	Դիգոքսին Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ	Դեղահաբ 0,25 մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	5,48	15344	2800	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	2800	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
13	33631310	Դիկլոֆենակ 5% 50 գ	Դիկլակ դոնդող 5% Սալուտաս Ֆարմա Գմբհ	Ալյումինե պարկուճ 5% 50գ <<վախենում է ջերմությունից>>	հատ	1559	436520	280	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	280	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
14	33631310	Դիկլոֆենակ թ/պ 50 մգ	Դիկլոֆենակ Հեմոֆարմ Ա.Դ.	դեղահաբ 50մգ/գ, <<վախենում է ջերմությունից>>	հատ	15,75	25200	1600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1600	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
16	33611170	Դրոտավերին 40 մգ	Դրոտավերինի հիդրոլորիդ, "Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան"	Դեղահաբ 40մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	9,55	19100	2000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	2000	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

			ԲԲԸ								
17	33611170	Դրոտավերին 80 մգ	Նոե-շպա ֆորտե Խինոին Դեղագործական և Քիմիական Գործարան Փրայվիտ Քո. ՍՊԸ	Դեղահաբ 80մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	47,7917	19116,67	400	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	400	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
18	33621210	Երկաթ պարունակող համակցություն 100 մգ	Ֆերում Լեկ Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա	Դեղահատեր ծամելու 100մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	73,9667	22190	300	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	300	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
19	33621210	Երկաթ պարունակող համակցություն 50 մգ/մլ	Ֆերում Լեկ Սանդոզ Իլակ Սանայի վե Տիկարետ Ա. Ս	Օշարակ 50մգ/5մլ, 100մլ ապակե շշիկ ‹‹կոտրվող է››	հատ	1182	70920	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	60	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
21	33621520	էնալապրիլ+հիդրոքլորոթիազիդ 10+12.5 մգ	Էնապ- ՀԼ ԿՌԿԱ դ.դ	Դեղահատ 10մգ+12,5մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	56,25	506250	9000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	9000	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
23	33661156	Թիմոլոլ 0,5 % 5մլ	Թիմոլոլ Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ.	Ակնակաթիլ 0,5 % 5մլ, պլաստիկե սրվակ <<վախենում է ջերմությունից>>	հատ	431	34480	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	80	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*
26	33642230	Լևոթիրոքսին 100մկգ	Լ-թիրոքսին Բեռլին-Քեմի Ա.Գ.	Դեղահատ 100մկգ ‹‹վախենում	հատ	11,01	15414	1400	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության	1400	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու*

				է խոնավությունից››					Վրադեղատուն		դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
27	33642230	Լևոթիրոքսին 50 մկգ	Էութիրոքս Մերկ ԿԳԱԱ	Դեղահատ 50մկգ ‹‹վախենում է խոնավությունից››	հատ	10,97	7679	700	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրադեղատուն	700	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
29	33611200	Լոպերամիդ 2մգ	Լոպերամիդի հիդրոքլորիդ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան»ԲԲԸ	Դեղահատ 2մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	7,6	6080	800	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրադեղատուն	800	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
30	33671131	Լորատադին 10 մգ	Լորատադին Արփիմեդ ՍՊԸ	Դեղահատ 10մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	23,2	34800	1500	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրադեղատուն	1500	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
32	33691231	Կալցիում+խոլեկալցիֆերոլ ծամելու 500մգ+10մկգ	Դետրիմեդ Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ	Դեղահատ 500մգ+10մկգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	37,6	112800	3000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրադեղատուն	3000	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
33	33621510	Կապտոպրիլ 25 մգ	Կապտոպրիլ «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան»ԲԲԸ	Դեղահատ 25մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	3,825	22950	6000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրադեղատուն	6000	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
35	33631300	Կետոպրոֆեն 50 մգ դ/պատիճ	Կետոնալ Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ.	Դեղահատ 50մգ ‹‹վախենում	հատ	36,24	90600	2500	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրադեղատուն	2500	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի

				է խոնավությունից››							միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
36	33631300	Կետոպրոֆեն ներարկման 50մգ/մլ	Կետոնալ Լեկ Ֆարմասյուտիկալս դ.դ.	Լուծույթ ներարկման 50մգ/մլ <<կոտրվող է>>	հատ	148,167	8890	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա գեղատուն	60	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
39	33621700	Մետոպրոլոլ 25 մգ	Էգիլոկ Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	Դեղահատ 25մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	17,4667	62880	3600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա գեղատուն	3600	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
41	33611150	Պանկրեատին (լիպազ3500ԱՄ+ամիլազ 4200ԱՄ+ պրոտեազ 250ԱՄ) դ/հատեր թաղանթապատ	Մեզիմ-Ֆորտե Բեռլին-Քեմի ԱԳ	Դեղահատ <<վախենում է խոնավությունից>>	հատ	28,6	171600	6000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա գեղատուն	6000	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
42	33661122	Պարացետամոլ 120մգ /5մլ	Պարացետամոլ երեխաների համար Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ	Լուծույթ ներքին ընդունման 120մգ/5մլ ապակե կամ պլաստիկե շշիկ և չափիչ բաժակ <<կոտրվող է>>	հատ	500	40000	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա գեղատուն	80	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
43	33661122	Պարացետամոլ 500մգ	Պարացետամոլ Ֆարմստանդարտ-Լեկսրեդստվա ԲԲԸ	Դեղահատ 500մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	5,5	27500	5000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա գեղատուն	5000	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

44	33691186	Պիրացետամ 800 մգ	Լուցետամ էգիս Ֆարմասյուտ իկալս ՓԲԸ	Դեղահատ 800մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	52,0667	624800	12000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	12000	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
45	33691133	Ջուր ներարկման 2մլ	Ջուր ներարկման Երևանի Քիմիադեղագ ործական ֆիրմա ԲԲԸ	Լուծույթ ներարկման 2մլ ամպուլներ <<կոտրվող է>>	հատ	19,2	960	50	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	50	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
50	33621730	Վերապամիլ 80մգ	Վերապամիլ Ալկալոիդ ԱԴ Սկոպյե	Դեղահատեր թաղանթապատ 80մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	20,9333	9420	450	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	450	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
51	33631380	Տոլպերիզոնի հիդրոքլորիդ 150մգ	Միդոկալմ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ	Դեղահատ 150մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	126,6	189900	1500	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	1500	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
52	33651118	Ցեֆտրիաքսոն 1գ	Ցեֆտրիաքսոն «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ	Դեղափոշի ներարկման լուծույթի 1գ սրվակ <<կոտրվող է>>	հատ	171	8550	50	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	50	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
53	33651134	Ցիպրոֆլոքսացին ակնակաթիլ 3մգ/մլ, 5մլ	Ցիպրոֆլոքսացին Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ.	Ակնակաթիլ 3մգ/մլ, 5մլ պլաստիկե սրվակ <<վախենում է	հատ	388	23280	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	60	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու

				ջերմությունի g››							օրվանից սկսած
54	33671116	Քսիլոմետազոլին քթակաթիլ 0,5մգ/մլ	Գալազոլին Պոլֆա 0,05% Վարշավայի դեղագործական գործարան «Պոլֆա» Ս.Ա.	Քթակաթիլ 0,5մգ/մլ, 10մլ պլաստիկե շշիկ <<վախենում է ջերմությունի g>>	հատ	300	18000	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	60	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
57	33611220	Ներքին ընդունման ջրավերականգնիչ աղեր 18.9 գ փաթեթ	Ռեհիդրոն Ռեցիֆարմ Պարետս Ս.Է.Ռ.	դեղափոշի դեղաչափված փաթեթիկներ	հատ	205	16400	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	80	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
58	33621590	Ֆուրոսմիդ 40 մգ	Ֆուրոսեմիդ Արփիմեդ ՍՊԸ	Դեղահատ 40մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	3,3	19800	6000	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	6000	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
59	33642210	Պրեդնիզոլոն 5մգ դ/հ	Պրեդնիզոլոն-Բելմեդ Բելմեդպրեպարատի ՀՈՒՋ	Դեղահատ 5մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	7,38	738	100	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	100	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
60	33691121	Ալբենդազոլ 400 մգ դ/հ	Ալբենդազոլ Արփիմեդ ՍՊԸ	Դեղահատ 400մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	173,25	10395	60	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	60	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
61	33631491	Ցետիրիզին 5մգ դ/հաբ	Պարլազին Էգիս Ֆարմասյուտ	Դեղահատ 5մգ <<վախենում	հատ	76,0667	22820	300	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	300	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու

–			իկալս ՓԲԸ	է խոնավությունից>>							դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
62	33621560	Ռամիպրիլ+հիդրոքլորթիազիդ 2,5մգ+12,5մգ դ/հաբ	Հարտիլ-Դ Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	Դեղահատ 2,5մգ+12,5մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	79,0714	23721,43	300	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	300	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
63	33621767	Իզոսորբիտի մոնոնիտրատ 60մգ	Մոնոսորբ Իքսել 60մգ Երկարատև Ձերբազատմամբ Դեղահատեր Դեքսել-Ֆարմա ՍՊԸ	Դեղահատ 60մգ <<վախենում է խոնավությունից>>	հատ	153,464	92078,57	600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	600	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
65	33621460	Պերինդոպրիլ 5մգ + Ամլոդիպին 5մգ դ/հաբ	Պրեստանս Սերվիե (Իռլանդիա) Ինդաստրիս ՍՊԸ	Դեղահատ <<վախենում է խոնավությունից>>	հատ	152,167	91300	600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	600	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
66	33621720	Բիսոպրոլոլ 5 մգ + Ամլոդիպին 5մգ դ/հաբ 300մգ	Ալոտենդին Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	Դեղահատ <<վախենում է խոնավությունից>>	հատ	135,933	81560	600	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	600	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած
68	33651112	Ամոքսիցիլին + քլավուլանաթթու դ/կախույթ 125մգ/5մլ+31,25մգ/5մլ 22հիկում	Ամոկսիկլավ 156.25մգ/5մլ ներքին ընդունման դեղակախույթի դեղափոշի Լեկ դ.դ.	Դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 125մգ/5մլ+31,25մգ/5մլ, <<կոտրվող	հատ	859	68720	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	80	2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած

				Է>>							
69	33651112	Ամոքսիցիլին+քլավուլա նաթթու 250մգ/5մլ+ 62,5մգ/5մլ մգ 22իկում	Ամոկսիկլավ 312.5մգ/5մլ ֆորտե Լեկ դ.դ.	Դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 250մգ/5մլ+ 62,5մգ/5մլ <<կոտրվող Է>>	հատ	2670	213600	80	Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.-ից 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատուն	80	*2021թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*

***ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Համաձայն ՀՀ Կառավարության 2013 թվ.-ի մայիսի 2-ի N 502-Ն որոշման 7-րդ կետի՝ դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը, գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:**

Բոլոր հղումների դեպքում հասկանալ <<կամ համարժեք >> արտահայտությունը:

. Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման սահմանվում է սպասարկման տարածքում գործող՝ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատների գտնվելու պահանջը, իսկ մինչև 5 կմ շառավղով հեռավորության վրա դեղատան բացակայության հիմքով գնման ընթացակարգը չկայանալու դեպքում հայտարարվում է նոր գնման ընթացակարգ՝ սահմանելով սպասարկման տարածքում գործող՝ մինչև 15 կմ շառավղով հեռավորության վրա դեղատների գտնվելու պահանջը:

Գնման ընթացակարգի արդյունքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որակավորումը հիմնավորող փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող դեղատան մասին տեղեկատվություն (անվանումը, գտնվելու հասցեն, եթե առաջարկվող դեղատունը չի հանդիսանում հաղթող ճանաչված մասնակցի դեղատան մասնաճյուղ, ապա ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագիր): Տեղեկատվության հիման վրա գնահատվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը: ԱԱՊ և հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքված պայմանագրում նշվում է դեղատան վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը **Գնորդին** ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է **ֆինանսական** միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

<<Գուգարք>> ԿՊ ՊՓԲԸ
Ք. Վանաձոր, Բաթումի 13փ.
ՀՎՀՀ 07300626
Բանկ՝ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
Վանաձորի մ/ճ
հ/հ 247170009424
Տնօրեն՝ ----------Մ. Ա. Սիմոնյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ
ք. Երևան, Շիրակի 1/68
ԷՎՈԿԱԲԱՆԿ
Հ/Հ 16600-05218060100
ՀՎՀՀ 05507136
Հեռ. 060 700-500
էլ. հասցեն՝ tender@alfapharm.am

/ստորագրություն/
Կ.Տ